ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԵՆ ԿԱՆԱԴԱՅԻ ՆՅՈՒ ԲՐԱՆՍՎԻԿ ՆԱՀԱՆԳԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

02.10.2025 17:15

ՀՀ փաստաբանների պալատը, ի դեմս պալատի նախագահ Սիմոն Բաբայանի և ՀՀ փաստաբանական ակադեմիան, ի դեմս ռեկտոր Արա Ջոհրաբյանի, հյուրընկալել են Կանադայի Նյու Բրանսվիկ նահանգի Գերագույն դատարանի նախագահ Մարկ Ռիչարդի գլխավորած պատվիրակությանը՝ Նոր Շոտլանդիա նահանգի Վերաքննիչ դատարանի դատավոր Քերոլ Բիթոնի, Կանադայի արդարադատության կառավարման ինստիտուտի գործադիր տնօրեն Քրիստին Օ'Դոհերթի, Կանադայի Դաշնային դատական գործերի հանձնակատարի գրասենյակի միջազգային ծրագրերի տնօրեն Օլեգ Շակովի կազմով:

Հանդիպմանը ներկա են եղել նաև ՀՀ փաստաբանների նախագահի տեղակալներ Հարութ Ակլուճցը և Հարություն Թունյանը, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը և Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը վերաբերող առկա խնդիրները:

ՀՀ Փաստաբանների պալատի նախագահը ներկայացրել է այն հիմնական մարտահրավերները, որոնց փաստաբանները բախվում են նշված ոլորտում, որոնք ոչ միայն ներպետական մակարդակի են, այլև ավելի լայն տարածում ունեն և հաճախ ընդգրկում են ամբողջ աշխարհը:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը ներկայացրել է տեղեկատվություն գրասենյակում առկա՝ անչափահասների մասնակցությամբ թմրանյութի ապօրինի շրջանառության հետ կապված գործերի քանակի և գործերի առանձնահատկությունների մասին:

Միջազգային գործընկերների պատվիրակությունը նաև շրջայց է ունեցել ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի տարածքում, այցելել ՀՀ փաստաբանական ակադեմիա և Հանրային պաշտպանի գրասենյակ:

ՀՀ փաստաբանական ակադեմիայում հյուրերին ողջունել է ռեկտոր Արա Ջոհրաբյանը: Նա միջազգային գործընկերներին շնորհակալություն է հայտնել Փաստաբանական ակադեմիայում հյուրընկալվելու համար, ծանոթացրել Ակադեմիայի աշխատանքային պայմաններին և ուսումնական գործընթացներին:

Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեությանը միջազգային գործընկերներին ծանոթացրել է Գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը:

Հանդիպման ավարտին կողմերը երկուստեք շնորհակալություն են հայտնել արդյունավետ հանդիպման, ոլորտին առնչվող առանցքային հարցերի շուրջ բովանդակային քննարկումների և փորձի փոխանակման համար:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })